

դիր Թուրքոֆոր հոն իր այցելութեան կը վկայէ որ «եկեղեցւոյն սալալատակը եւ դասը ծածկուած էր աղնիւ դորդերով»⁽³⁸⁾ :

Երուսաղէմի մեր վանքին հնութեանց մէջ է նաեւ մետաքսառէջ գեղեցիկ դորդ մը (նկար 1, 2), որուն վրայ հիւսուած է կրկին յիշատակարան (դիրար կրկնող բառ առ բառ) : Ահա այդ յիշատակարանը : «Յիշեցէք ի մաքրափայլ յազօթս ձեր Ներսէս մեղապարս Կ(ա)թ(ո)ղ(ի)կոս Աղուանի(ց) է պատճառ սմին (․․․այրած․․․) լոյսընկալ Չարեքու Սը. Անապատին ՌՃՁ ԹՎին» : Թուականը հաւասար է 1731ի երբ արդարեւ Աղուանից կաթողիկոս կը յիշուի Ներսէս Գանձակեցի : Յաւալի է որ այս արժէքաւոր դորդը արկածի մը պատճառաւ մասամբ հրկիրուած է, թէեւ դեռ ներկայանալի : Երուսաղէմ ունի ուրիշ մէկ քանի արժէքաւոր դորդեր ալ, սակայն առանց Հայ յիշատակարանի :

Շատ ցաւալի է որ մեր վանքերն ու եկեղեցիները պահած չեն իրենց նուիրուած գորգերը, եւ անոնց մաշէլէն վերջ իբր անպէտ իր՝ նետած են : Տղիտութիւնը, որուն մէջ թաղուած էր մեր այդ շրջանի եկեղեցականութիւնը, իրապէս այսպանելի է, մանաւանդ երբ նկատի առնենք որ նոյնիսկ սրբազան կամ կարեւոր ձեռագիր մատենաներն իսկ այս կամ այն կերպով ի սպաս փճացուած են, ուրեմն զժուար պիտի ըլլար ակնկալել թէ հայ կրօնաւորները կարենային որեւէ արժէք տեսնել գորգի նման հասարակ իրերու մէջ : Այդ իսկ պատճառաւ, Հայաստանը, միշտ ճոխ պահուած եկեղեցիներու դանձարանները կողոպտող արտաքին թշնամւոյն իր տուրքը տալէ զատ, փուած է նաեւ խոշոր հարկ մը ժամանակուան անգլիտակից եկեղեցականութեան անհոգութեան, այն աստիճան որ էջմիածնի եւ Երուսաղէմի հնադարեան եւ կարեւոր հայ վանքերուն մէջ անգամ չենք հանդիպիր հնադրտական արժէք ներկայացնող մէկէ աւելի գորգի, եւ այս վանքերը՝ պէտք չէ մոռնալ՝ կը յիշուին իբրեւ սրբափայլեր, ուր գորգերու գործածութիւնը, եւ դարմանալի է ըսել պաշտամունքն իսկ, գոյութիւն ունեցած է պատմութեան մէջ յիշուելու չափով :

Ժժժ դարուն գորգերու արտասահմանեան առևտրական պահանջը, նշմարելի կենսունակութիւն մը ստեղծեց Հայաստանի գորգարտագրութեան զանազան շրջաններուն մէջ : Այդ ժամանակուան Եւրոպա տարածուած Կովկասեան գորգերու մեծ մասը հայկական արտագրութիւն կրնանք սեպել, եւ ասիկա հաստատելու համար անտարակուսելի տուեալներ չեն պակսիր : Անգլիացի Lieut. Col. John Johnson 1817ին իր ուղեւորութեան ընթացքին կը հանդիպի հայկական Կովկաս : Հին Նախիջևեանի մէջ ան կը հիւրասիրուի հայու մը տունը. տան տէրը «գորգեր սիւնեց», ճաշ տալով : Ան կ'աւելցնէ. «Հայերը, Յոյն եկեղեցւոյ պատկանող քրիստոնեաներ»⁽³⁹⁾, իմ տեսածիս համաձայն՝ գործունեայ եւ խաղաղասէր կ'երևան : Անոնք կը գերազան-

(38) A Voyage Into The Levant. — London, 1741, Vol. III, p. 170.

(39) Հեղինակը որոշ կերպով կը սխալի հոս :